

† ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԵՈՒԻԴԱՐԵԱՆՑ

Երբ մեզանում գիտնական հիմունքների վրայ դրած ազդագրական հնտագոտութեան մասին զեռ ևս պարզ գաղափար չունէին, հանդէս էին գալիս հազիւ տարրական կրթութիւն ստացած եռանդում և ժողովրդասէր անհատներ, որ ըշջելով ժողովրդի մէջ՝ աղդագրական նիւթեր էին հաւաքում կամ մեր բնաշխարհի նկարդրութիւնը տալիս մեզ Այդպիսի ինքնուած նկարագրողների շարքում աչքի են ընկնուած կուսակրօն հոգևորականներից շատերը. որանց ամենապայլը ներկայացուցիչն էր տաղանդաւոր Սրուանձտեան հանգուցեալ եպիսկոպոսը, որի «Համով հոտով», «Հոնոց նորոցը», «Թրիչ-բրիչը» մի մի գոհարներ են հայ ազդագրութեան տեսակէտից: Ըստհանոււր գնահատութեան արժանացան նաև Սարգիս եպիսկոպոս Զալարեանցի «Շւղմորութիւնները», որոնք մինչև վերջին ժամանակները մի տեսակ ընդիկերի պաշտօն էին կատարում՝ մեր երկրի վանքերն ու արձանագրութիւնները տեսնել ու հնտագոտել ցանկացող ճանապարհորդների համար:

Ահա այդ անձերի շարքում պէտք է դասել նաև Մակար եպիսկոպոս Բարիստարեանցին, որ իւր ժամանակակից և ուսումնակից կուսակրօններից շատ էր տարրերում՝ իւր հնտագրքութեամբ, աշխատասիրութեամբ և խուզարկու բնաւորութեամբ: Նա անկեղծ սիրում էր իւր գործը և ամբողջ հոգուով նուիրուած էր դրան՝ չնայելով իւր թերի ուսմանը և կարևոր պատրաստութիւնից զուրկ լինելուն:

Հանգուցեալ Մակար եպիսկոպոսը ծնուել է 1832 թ. Շուշու գաւառի Խանածախ գիւղում և երեսուն տարեկան հասակում գընացել Երուսաղէմ, ուսում առել հանգուցեալ Մելիքսետեկ արքեպիսկոպոս Մուրագեանի մօտ և 1870 թ. նայի պատրիարքի օրով վարդապետ ձեռնադրուել: 1880 թ. Գէորգ կաթողիկոսի հրամանով ընդունուել է որ. Էջմիածնի միաբան: Այսուհետեւ կը քօնուասոյց է եղել Շուշուայ թէ ոչաւական և թէ թեմական գըպրոցներում: Սաղիանի վանքի վանահայր է եղել, 1894 թ. եպիսկոպոս ձեռնադրուելով կարգուել է Շամախու թեմի առաջնորդ, ապա մայր Տաճարի լուսարարապետ և վերջը Սինոդի անդամ: 1906 թ. տկարութեան պատճառով հրաժարուելով սինոդի անդամութեան պաշտօնից՝ ցանկանում էր ծերութեան օրերն անդրր անցնել Ագուլիսի Ս. Թովմայի վանքում, բայց փետրուարի 6-ին մահը վրայ հասաւ նրան սր. Էջմիածնում:

Հանգուցեալը շարունակ ճանապարհորդում էր պաշտօնից ազատ ժամանակները և նիւթեր ժողովում նա լաւ ըմբռնում էր դործը. . . նախ անձամբ հետազօտեմ Աղուանից ամբողջ երկիրը, աշքովս տեսնեմ երկրի դիրքը, ձեռքովս զոշափեմ ողջ հնութիւնները, ուշի ուշով ականեմ արձանագրութիւնները և կոթողները, ժանօթանամ ազգաբնակութեանց և լիզուններին»... և այս դրում է նա հանգուցեալ ընտրեալ կաթուղիկոս Մուրադեանին (տես. պատմութիւն Աղուանից. Ա. հատոր, յառաջարան). «Արհամարհելով արդիւնարքու աւազակաց երկիրով և զիշապիչ գազանների վտանգը, որք անպակաս են Կովկասեան և Անդրկովկասեան երկրներում, մանաւանդ անմարդաբնակ և մեծ մեծ անտառներում, աւերակ բերդերում, խոր խոր ձորերում և մութ մութ քարայրերում, ամբողջ 7 ամիս հետազօտեցի Դաղստանի (Խազրաց և Աւրանաց), Դարրանդի, Ալերայի (Ճղրաց և Լինաց երկիր), Բագուի, Շամախու, Շաքուայ, Ջառի և Բաղասականի գաւառները՝ լիռներով և գաշտերով միասին»: (Տես. նոյնը) — Այս հետախուզութիւնների արդիւնքը հանգուցեալը միացնում է «Աղուանից երկիր և դրացիք աշխատութեան մէջ»: Այսուհետեւ նա ճանապարհորդում է Մուղանի, Գարգարացւոց և Գագայ գաշտերը և Արցախի բոլոր գաւառները, որի արդիւնքն է լինում «Արցախը», Այդ տեղագրական աշխատութիւնների մէջ հանգուցեալը թէև հարկաւ ոչ սիստեմատիկ կերպով և գիտութեան պահանջների համեմատ, բայց և այսպէս դիտողական եղանակով անում է Արցախի ամբողջ տեղագրութիւնը:

Բացի այս գույտ տեղագրական-ազգագրական աշխատութիւններից՝ Մակար եպիսկոպոսը գրեց նաև պատմական հետազօտութիւն՝ «Պատմութիւն Աղուանից» անունով, որի առաջին մասը տպագրուեց և հասցրած է մինչև մելիքութեան ծագումը, իսկ երկրորդ աւելի հետաքրքրական մասը «Մելիքութեան ծնած օրից մինչև Աղուանից կաթուղիկոսութեան մահը», չէ տպագրուած և ցանկալի է, որ հեյինակի մանից յետոյ անհետ չկորչի, ինչպէս սովորաբար լինում է մեղանում:

Մակար եպիսկոպոսն ունի նաև մի քանի ժողովրդական հըրատարակութիւններ. «Միքան և Աննա», «Արագը տարին կտարի», «Գլը»—Պուղիք, «Զաշնաւրհիկ տղայ», «Չորսանն ու նշանածը»՝ ունի և կրօնական բովանդակութեամբ մի քանի աշխատութիւններ. Ամենից մեծ ուշադրութեան արժանացաւ և իւր ժամանակ հետաքրքրական գրական վիճաբանութեան առարկայ գարձաւ, հանգուցեալի հրատարակած «Դաղունից Ղարաբաղոյի» աշխատութիւնը, որ մինչև այսօր էլ առեղծուած է մնացել. ի. ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ